


Հ Յ Ա Ն

ՀԵՂԻՒՄԿԻ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆՔԸ

Հ Յ Ա Ն Ի Վ Ա Ռ Ո Ռ

Հեղինակի իրավունքի գերս բերյալ

n r b g f g b r p



ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՅԱՀ ԱՐԴՅՈՂԿԱՍՏԻ
Ց Խ Բ Կ Ա Խ Ա 1935 թ.

51 MAR 2010

Ա. ՅԵՍԱՅԱՆ

347

T-58

ՀԵՂԻՆԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Յ

Հեղինակի իւավունի վերաբերյալ
n v b g f g b r p



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՅԵԿ ԱՐԴԺՈՂՈՍՈՒԹԻ
Ց Ե Ր Կ Ա Խ Ա Ն — 1935 թ.

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Կուլտուրական հեղափոխության խնդիրները պահանջում են հեղինակների գործունեյության խրախուսումը բոլոր տեսակի միջոցներով, ուստի խորհրդային որենսդրությունը հեղինակի էրավունքն ընդունում և իր ամբողջ ծավալով։ Աշխատավորության զարգացող կուլտուրական պահանջները բաժարարելու համար, մեր որենսդրությունը, հեղինակների գործունեյությունը խրախուսելու նպատակով, տալիս և նրանց եյական արածությունների Մեր օրենսդրությունը գրական, գեղարվեստական և գիտական սահեղագործությունը զարգացնելու համար, նպաստավոր պայմաններ ստեղծելու և հեղինակներին խրախուսելու խընդիրների հետ միաժամանակ, անհրաժեշտ պայմաններ և ստեղծում գիտության, գրականության և արվեստի յերկերը աշխատավորական լայն մասսաների սեփականությունը դարձնելու համար։ Կապիտալիստական սիստեմում մտավոր աշխատանքի արդյունքը դառնաւմ և ապրանք, ընդ գորում՝ այդ յուրահատուկ ապրանքի տարածողը սովորաբար հանդիսանում և վոչ թե ընթաց հեղինակը, այլ կապիտալիստ-հրատարակիչը վորը հեղինակներին վճարում և նվազագույն հոնարար և ինքը այդ գործությունը ստանում և մեծ ոգուած։ Այստեղ հեղինակի իրավունքը դառնում և մտավոր աշխատանքի շահագործման ձևերից մեկը, վորը բայն չափով տարածված և կապիտալիստական յերկներում։ Այդ պայմաններում ի հարկե, դժվար և խսիր մտավոր «ազատ» ստեղծագործության մասին, առավել ես, յեթե նկատի ունենանք, վոր կապիտալիստական ներկա սիստեմում հեղինակի իրավունքի ստարդումը խոշոր կապիտալիստական հրատարակչություններին ավելի յետ տարածվում, վոչ միայն հեղինակի ներկա յերկերի, այլև նրա ապագա աշխատանքների վրա։ Այստեղ ունենք մտավոր աշխատանքի արտադրանքի յուրահատուկ «կոնուրական» ցիաման։

Հեղինակի իրավունքի հարցերը մեզ մոտ՝ գնալով ավելի և



ավելի ակտուալ են դառնում վոչ միայն հեղինակների և հրա-
տարակիչների, այլ նաև աշխատավորների և խորհրդային նա-
սարակության լայն շրջանների համար: Մի կողմից այդ մեծ հե-
տաքրքրությունը դեպի հեղինակի իրավունքի հարցերը և մյուս
կողմից՝ հեղինակի իրավունքի մասին հայերեն լեզվով սխալ-
մատիզացիայի յենթարկված որենսդրության հավաքածույթի բա-
ցակայությունը պատճառ հանդիսացան, վոր Արդժողկոմատը
ձեռնարկի այս բրոշյուրի հրատարակությանը:

1. ՀԵՂԻՆԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

ԽՍՀՄ-ում հեղինակի իրավունքի ինստիտուտի դարգացման
Համառոտ պատմությունը հետեւյալն եւ—

1917 թ. գեկտեմբերի 29-ին լույս տեսավ ՌՍՖՌՀ-ի կառա-
վարության առաջին դեկրետը՝ պետական հրատարակչության
մասին (ՌՌԿնքների Ժողովածու, 1918 թ. № 14, հոդ. 201): Այդ
դեկրետը իրավունք տվեց՝ ազգայնացնելու այն բոլոր հեղինակ-
ների յերկերը, վարոնց վերաբերմամբ հեղինակի իրավունքի ժա-
մանակը լրացել եր, նպատակ ունենալով գրականության կլա-
սիկների և գիդարվեստագետների աշխատանքները հրատարակել
եժանագին հրատարակությամբ կամ մրի: Այդ դեկրետի հիման
վրա 60 հեղինակների յերկեր հայտարարվեցին վորպես պետու-
թյան մենաշնորհ՝ 5 տարի ժամանակով: Հետագայում, 1918 թ.
նոյեմբերի 26 ի դեկրետով Լուսժողկոմատին իրավունք վերա-
պահվեց՝ ամեն մի յերկ հայտարարել պետության սեփականու-
թյունը՝ վերահրատարարակուան համար: Զազգայնացված յերկերի
համար մնում եր արտադրության ազատությունը՝ հեղինակի
կենդանության ժամանակ, բացառապես հեղինակի հետ համա-
ձայնության գալու միջոցով: Զազգայնացված յերկերի համար,
հեղինակին կենդանության ժամանակ տրվում եր հոնարար հա-
տուկ զրույքներով, իսկ մահացած հեղինակների ժառանգների
վերաբերյալ սահմանվեց ապահովություն ի հաշիվ այդ հոնա-
րարի:

Նրանից հետո, համաձայն ՌՍՖՌՀ կառավարության 1919
թ. հոկտեմբերի 10-ի վորոշման, բոլոր այն պայմանագրերը, վո-
քոնք հրատարակչությունները կնքել եյին հեղինակների հետ և
վորոնց հիման վրա նրանց գրական, գեղարվեստական և յերա-
ժշտական յերկերն անցյալում անցել եյին հրատարակչություն-
ներին վորպես նրանց սեփականությունը, հայտարարվեցին ան-
վավեր և վերացվեցին: Նման լայմանագրերը դեկրետը հայտարա-

բարեց ստրկացուցիչ և արգելեց, Հետագայում հեղինակի հետ դրավոր պայմանագիր կնքելու կարգը սահմանվեց: Պայմանագրում ցույց եր արդում տպագրվող յերկի տիրաժի քանակը, վարձատրության չափը (ընդ վորում վարձատրությունը սահմանված տարինեց ցածր չպետք է լիներ) և հրատարակության իրավունքից ոգտվելու ժամանակամիջոցը: Հեղինակի իրավունքի վերաբերյալ ՌՍՖԽՀ-ի վերոնիշյալ ամբողջ որենսդրությունը, համաձայն Հայաստանի Հեղինակության 1920 թվի դեկտեմբերի 21-ի ընդհանուր վորոշման, տարածվեց նաև ՀՍԽՀ-ի սահմաններում՝ քանի վոր Հեղինակի այդ վորոշմամբ, ՌՍՖԽՀ-ի ամբողջ որենսդրությունը պարտադիր համարվեց ՀՍԽՀ-ում, այն լրացումներուվ և փոփոխություններով, վորոնք հետագայում այդ որենսդրության մեջ կմուցներ ՀՍԽՀ-ի կառավարությունը (1920 թ. պլան 1. ին, հոդ. 39):

Հեղինակի իրավունքի մասին միաւթենական որենքն առաջին անգամ հրատարակվեց ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի և Փողկոմի կողմից 1925 թ. հունվարի 30-ին, վորը ամբողջ Միության մեջ կիրառվեց մինչև 1928 թ. (ԽՍՀՄ Որենք. և Կարգադրություն. 1925 թ. № 7, հոդ. 66 և 67):

Ներկայում մեզ մոտ հեղինակի իրավունքի վերաբերյալ գործում են հետևյալ որենքները՝

ա) ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի և Ժողկոմի մորհի 1928 թ. մայիսի 16-ի «Հեղինակի իրավունքի հիմունքների մասին» վորոշումը (Որենքների և Կարգադրությունների Ժողովածու, 1928 թ. № 27, հոդ. 245 և 246):

բ) ՀՍԽՀ-ի Կենտգործկոմի և Ժողկոմի մորհի 1930 թ. վերը վարդի 10-ի «Հեղինակի իրավունքի կանոնադրության մասին» վորոշումը (Որենքների և Կարգադրությունների Ժողովածու, № 2, հոդ. 34—35), վորը հրատարակված ե հեղինակի իրավունքի հիմունքների մասին միաւթենական որենքի հիման վրա:

Դրանցից վերջում, վորպես Յավելված տրվում են ներկայում հեղինակի իրավունքը կարգավորող վերը հիշված ամբողջ որենսդրությունը և այդ պատճառով այստեղ առանձնապես կանգ չենք առնում նրանց վրա, վորովհետև այս գրքույթը կազմված ե Հայավորապես, այդ որենքների և մի շարք պաշտոնական պարագանությունների ու հրահանգների հիման վրա:

2. ՀԵՂԻՆԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈԲՅԵՏԸ

Մեղ մոտ հեղինակի իրավունքը տարածվում և զրականության, զիառության և արվեստի յերկերի համարյա բոլոր տեսակների վրա, անկախ նրանց ստեղծման յեղանակից ու ձևերից և նրանց արժեքից ու նպատակից, այն եւ՝
ա) բանավոր յերկերի (հառեր, դասախոսություններ և այլն),
բ) զրավոր յերկերի (զրքեր, հողվածներ, ժողովածներ և այլն),

ց) զրամատիկական և յերաժշտական-զրամատիկական,
դ) թարգմանությունների,
յի) խորեոգրաֆիկ յերկերի և մնջախաղերի (պանտոմիմա) վրա, վորոնց բեմակատարման վերաբերման կան զրավոր կամ այլ ձևով շարադրված ցուցումներ,
շ) կինեմատոգրաֆիկ սցենարիանների,
ե) յերաժշտական յերկերի վրա՝ տեքստով կամ առանց տեքստի,
ը) նկարների, բլուստրացիանների վրա, նկարչական արվեստի, քանդակագործության, ճարտարապետության և գծանկարչական գործերի վրա,
թ) աշխարհագրական քարտեղների,
ժ) պլանների, եսկիզների և պլաստիկ գործերի վրա, վորոնք վերաբերում են՝ դիտություններին, տեխնիկային կամ գրամատիկական կամ յերաժշտական-զրամատիկական յերկերի բեմադրությանը,

ի) կինո-ֆիլմերի վրա,
լ) լուսանկարչական կամ համանման յեղանակով ստացած գործերի վրա և այլն:

Հեղինակի իրավունքը կայանում ե նրանում, վոր վորին յերկի հեղինակին իրավունք և արվում իր անունով կամ պայմանական անունով (պահղոնիմ), կամ առանց անունը նշանակելու (անոնիմ) լույս ընծայելու յերկը, սահմանված ժամանակի ընթացքում տարածելու այն, ինչպես նաև որենքին չհակասող բոլոր յեղանակներով նյութական շահ ստանալու իր այդ իբաց վունքից:

Հեղինակի իրավունքը հանդիսանում ե բացառիկ իրավունք: Հեղինակը կամ նրա իրավահաջորդը միայն իրավունք ունին հեղինակի յերկը տարածելու և նրանից ոգտվելու, բացառությամբ

որենքով նախատեսված դեպքերից։ Հեղինակի այդ իրավունքին համապատասխանում և այլ անձանց պարտավորությունը՝ ձեռնապահ մնալ հեղինակի իրավունքի խախտումից, սակայն հեղինակի իրավունքը կարող է, առանց հեղինակի և նրա իրավահաշորդների համաձայնության, հարկագիր կարգով դնվել։ Այդ գնումը կարող է տեղի ունենալ բացառապես ՀՄԽՀ ժողկումիորնի վորոշմամբ։ Նման դեպքում հեղինակին կամ նրա իրավահաշորդին վճարելիք վարձատրության չափը վորոշում և ՀՄԽՀ կուսմողկումատը, համաձայնեցնելով այն ՀՄԽՀ Ֆինժողկումատի հետ։

Ինչպես արդեն ահսանք հեղինակի իրավունքի նպատակն է՝ պաշտպանել հեղինակի նյութական շահերը, վերապահելով նրան իր յերկը հրապարակելու և տարածելու բացառիկ իրավունք։

Մեր իրավունքը պաշտպանում և վճարում միայն հեղինակի նյութական, այլև նրա զուտ անձնական շահերը։ «Հեղինակի իրավունքը պաշտպանվում է նաև այն դեպքերում, յերբ իրավունքի խախտման հետ վորոշակի նյութական շահեր չեն կապված» (Հոդված 49)։ Հեղինակի այդ ահսակի անձնական շահերի կարգին կարելի յե դասել հեղինակի այն իրավունքը, վոր ու բարեհները առանց նրա գիտության իրավունք չունեն հրապարակ հանելու նրա չհրապարակված յերկը, կամ ուրիշի յերկը նրա անունով հրատարակելու այն, կամ ընդհակառակը՝ ուրիշի յերկը նրա անունով հրատարակելու այն, կամ ընդհակառակը՝ արգելել ամեն մեկին նրա յերկի մեջ փոփոխություններ և աղավաղումներ մտցնել, նրա պահպանիմը կամ անոմիմը յերևան հանել և այլն։ Այս բոլոր դեպքերում հեղինակը իրավունք ունի իր անձնական շահերը խախտողից պահանջելու, վորպեսզի նա կատարի իր խախտված որինական շահերը բավարարելու համար անհրաժեշտ գործողությունները, Այդ դեպքերում հեղինակին իրավունք և վերապահվում բոլոր ներկայացնելու դատական մարմիններին։ Հեղինակի իրավունքի բովանդակության այս ընդհանուր բնորոշումն իր մեջ պարունակում է մասնավորապես հեղինակի կողմից իր յերկը վերամշակելու իրավունքը, այսինքն՝ իր յերկը նույն բովանդակությամբ, փոփոխված ձեռն վերարտադրելու իրավունքը։ Որինակ՝ իր յերկը պատմողական ձերց գրամատիկականի և ընդհակառակը վերածելու, իր յերկը կիսոնկարների, յերաժշտական-

շրամատիկական և այլ յերկերի համար վերամշակելու իրավունքը և այլն։

Յերաժշտական յերկերի վերաբերմամբ հեղինակի իրավունքի մեջ մտնում է յերաժշտագետի իրավունքը՝ իր յերկը առանձին գործիքների, ամբողջ նվագակիմբի համար, մի կամ մի քանի ձայների, վերածելու իրավունքը և այլն։

Այսպես է հեղինակի իրավունքի բովանդակությունը դրական իմաստով, Մյուս կողմից որենքում հիշատակված վորոշդեպքերում հեղինակի իրավունքը սահմանափակվում է, այսինքն թույլատրվում է կողմնակի անձանց սպավելու ուրիշի յերկերից։ Որինակ՝ հեղինակի իրավունքի Զ-րդ հոդվածի համաձայն հեղինակի իրավունքի խախտում չի համարվում ուրիշի յերկի թարգմանությունը մի այլ լեզվով ուրիշի գրական յերկից վերցրած տեքստը կոմպոզիտորի կողմից իր յերաժշտական գործի համար ողտագործումը, յեթե այդ յերկի հեղինակն իր յերկի յուրաքանչյուր որինակի վրա ողտագործման արգելքի մասին հիշատակությունը չի համարվում ուրիշի յերկի գրական յերկից վերցրած ողտագործումը, յեթե այլն (մանրամասն առ ՀՄԽՀ հեղինակի իրավունքի կանոնադրության 9-րդ հոդվածը, հավելված № 2)։

Ինչպես վերևում հիշատակեցինք, մեր որենքը հրաժարվեց թարգմանության իրավունքը հեղինակի իրավունքի բաղկացուցիչ մասը ճանաչելուց և ուրիշի յերկի թարգմանությունը չի համարվում հեղինակի իրավունքի խախտում։ Այսպիսով մեր որենքը, հակառակ բուրժուական որենադրությունների մեծամասնության, սահմանում է թարգմանության աղատության սկզբունքը։ Այս հանգամանքը մեզ համար ունի խոշոր նշանակություն, քանի վոր մի կողմից այդ միջոցով հնարավորություն և ստեղծվում ԽՍՀՄ բազմազգի բնակչության կուլտուրական պահանջները բարերարելու և մյուս կողմից թարգմանության աղատությունը հեշտացնում ե ԽՍՀՄ-ի ազգերի միջն գրական, գեղարվեստական և գիտական հարստությունների փոխադարձ փոխանակությունը։

Այդ վերաբերում է հատկապես մանր աղջություններին վորոնք անցյալու կուլտուրապես հետամիաց են յեղել և ԽՍՀՄ-ի մեծ ու մտավորապես ազելի զարգացած աղջությունների յերկերի իրենց մայրենի լեզվով մեծ կարիք են դգում, ինչ վերաբերում է ոտարյերկյա հեղինակների թարգմանության աղատությանը, ապա հեղինակի իրավունքի պաշտպանության խնդրում, ոտարյերկյա հեղինակների տար քան թե ունեն մեր հեղինակները։

Թարգմանիչն իր թարգմանած յերկի նկատմամբ ձեռք և ըերուժ հեղինակի իրավունք և նրա, վորպես հեղինակի իրավունքը պաշտպանվում ե նույն հիմունքներով, ինչ հիմունքներով վոր պաշտպանվում ե ինքնուրույն ստեղծագործության հեղինակի իրավունքը: Այստեղ կարող ե առաջանալ այն հարցը, թե մի քանի թարգմանության գոյության դեպքում, նույն յերկի 2-րդ, 3-րդ թարգմանությունները արդյոք չեն համարվում առաջին թարգմանչի հեղինակի իրավունքի խախտում: Այս հարցին պետք ե տալ բացասական պատասխան: Թարգմանության արվեստը կատարելագործելու համար և նպատակ ունենալով թարգմանության բնագավառում մաքսիմալ նվաճումներ ձեռք բերել, մենք պետք ե քաջալերենք նոր և ավելի կատարելագործված թարգմանություններ: Թարգմանությունը չի համարվում զուտ միխանիկական աշխատանք, մատչելի բոլոր նրանց համար, ովքեր լիովին տիրապետում են բնագրի և թարգմանության լեզվին: Մեծ մասմբ թարգմանության, հատկապես գեղարվեստական յերկի լավ թարգմանության համար պահանջվում ե, բացի լեզվից, նաև թարգմանչի գեղարվեստական ճաշակը: Պուշկինի Սալթիկով-Շչերբինի, Դոստաևսկու կամ մի ուրիշի թարգմանության համար բավական չե միայն տիրապետել լեզվին, ողաճանշվում ե նաև թարգմանչի գեղարվեստական ճաշակը և կուլտուրականությունը: Նույնը պետք ե տաել նաև մարքսիզմի կումսիկների թարգմանիչների համար:

3. ՀԵՂԻՆԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏԸ

Հեղինակի իրավունքի սուբյեկտն ամենից առաջ հանդիսանում ե այն անձը, զորի ստեղծագործության արդյունք և գրական, գեղարվեստական, գիտական յերկը այդ աշխատության հեղինակը հանդիսանում ե այդ իրավունքի սկզբնական տիրապետողը: Հեղինակի իրավահաջորդները (ժառանգները հրատարակելու համարական անձը) սպազմում ին հեղինակի ածանցական իրավունքով, բնութագրության սրանց իրավունքը սահմանափակված է վորոշ ժամանակամիջոցով, զորի լրանալուց հետո այդ իրավունքը վերջնականապես դադարում է, մինչդեռ սկզբնական հեղինակի իրավունքը ցման և (մանրամասնորեն առ 4-րդ գլխում):

Հեղինակի իրավունքը կարող ե պատկանել մի քանի հեղինակների՝ վորպես յերկի ստեղծագործության համահեղինակների: Այս դեպքում հեղինակների իրավունքը յերկի ստեղծագործության համահեղինակների վորոշը մեջ հատուկ համաձայնությամբ: Համահեղինակների մեջ հատուկ համաձայնության բացահայության դեպքում, համաձայն ընդհանուր սեփականության իրավունքի կանոնների, յերկից ոգտվելու, յերկի վերաբերյալ կարգադրություններ անելու և նրանից շահ ստանալու իրավունքը հավասար չափով պատկանում է բոլոր համահեղինակներին: Հավաքական յերկի համահեղինակներից յուրաքանչյուրը կարող ե հեղինակի իրավունք վայելել յերկի իր մասի վերաբերմաբ միայն այն դեպքում, յեթե այդ մասնունի ինքնուրույն գիտական, գրական կամ գեղարվեստական նշանակություն, և յեթե համահեղինակների մեջ այլ համաձայնություն չի նախատեսված: Արինակ՝ հնարավոր և պատրաստել արձան, յերբ պատվանդանը պատրաստում ե մի քանդակագործ, վորը ներկայացնում ե ինքնուրույն գեղարվեստական արժեք, իսկ արձանի անդրին՝ մի ուրիշը և այլն: Մի քիչ բարդ և խընդիրը կինոժամապավենի նկատմամբ: Կինոժամապավենը հանդիմանում է բազմաթիվ անձանց՝ սցենարիստի, ռեժիսորի, ոպերատորի, գերասանների և ուրիշների կոլեկտիվ աշխատանքի ստեղծագործություն:

Վերոհիշյալ բոլոր անձինք համարվում են արդյոք կինոմատոգրաֆիկ յերկի համահեղինակներ և վորեկ չափով նրանց պատկանում են արդյոք հեղինակի իրավունքներ՝ կինոժամապավենի նկատմամբ: Թեպետ վերոհիշյալ անձանց նշանակությունը հատկապես ոհմիսյորների, բավականաչափ մեծ և կինոմատոգրաֆիկ յերկի ստեղծագործության մեջ, սակայն մեր որենքը վորպես հեղինակի իրավունքի սուբյեկտներ ճանաչում ե նրանցից միայն յերկուսին՝ սցենարիստին և կինոժամապավենը արտադրող՝ կինո արտադրական ձեռնարկությանը: Առաջին դեպքում սցենարիստն ստանում է կինոս սցենարիստի հեղինակի իրավունքը այն բոլոր հետեւանքներով, վորպի լրանալուց հետո այդ իրավունքը վերջնականապես դադարում է, մինչդեռ սկզբնական հեղինակի իրավունքը ցման և (մանրամասնորեն առ 4-րդ գլխում):

Հեղինակի իրավունքը կարող ե պատկանել մի քանի հեղինակների՝ վորպես յերկի ստեղծագործության համահեղինակների: Այս դեպքում հեղինակների նկարահանությանը մասնակցելու համար, կարող են վորեկ պատկանակի իրավունքը մնում և այդ ժամանակին արտադրող կինո արտադրական ձեռնարկությանը: Սնացյալները (ոհմիսյորը, ռեժիսորը, գերասանները և ուրիշները) կինոժամապավենի նկարահանությանը մասնակցելու համար, կարող են վորեկ պատկանակի իրավունքը մնում և այդ ժամանակին արտադրող կինո արտադրական ձեռնարկությանը: Սնացյալները (ոհմիսյորը, ռեժիսորը, գերասանները և ուրիշները) կինոժամապավենի նկարահանությանը մասնակցելու համար,

առանքային պայմանագրի հիման վրա և վոչ թե հեղինակի իրավունքի:

Հեղինակի իրավունքի սուբյեկտը վորոշելիս, նշանակություն ունի հեղինակի քաղաքացիությունը և յերկի հրատարակման տեղը:

Մեր որենքը առաջին հոդվածով ճանաչում ե բոլոր հեղինակների և նրանց իրավահաջորդների իրավունքը ԽՍՀՄ-ի սահմաններում լույս տեսած, կամ ձեռագրի, եսկիզի կամ այլ որյակտիվ ձևով գտնվող յերկերի վերաբերմամբ, անկախ նրանից, թե հեղինակը և նրա իրավահաջորդներն ինչ քաղաքացիության են պատկանում: Հեղինակի իրավունքի այսպիսի լրիվ հավասարություն իբ յերկերի և ստարյերկրյա քաղաքացիների միջև սահմանված ե վոչ բոլոր ստարյերկրյա օրենսդրություններով: Խորհըրդային քաղաքացի հեղինակը և նրա ժառանգները ստարպետության մեջ լույս տեսած, կամ ձեռագրի, եսկիզի կամ այլ որյակտիվ ձևով ստար պետության տերիտորիայում գտնվող յերկերի վերաբերմամբ ԽՍՀՄ-ի սահմաններում հեղինակի իրավունքի պաշտպանություն և ան վայելում անկախ այն հանգամանքից, թե այդ պետության և ԽՍՀՄ-ի միջև գոյություն ունի համապատասխան համաձայնություն, թե՝ վոչ: Ինչ վերաբերմամբ և հեղինակի իրավահաջորդներին, նրանք, ըստի ժառանգներից, վերոհիշյալ յերկերի վերաբերմամբ ԽՍՀՄ-ի տերիտորիայում հեղինակի իրավունքի պաշտպանություն չեն վայելում: Արտասահմանում լույս տեսած, կամ ձեռագրի, եսկիզի կամ այլ որյակտիվ ձևով արտասահմանում գտնվող յերկերի վերաբերմամբ, յեթե հեղինակը խորհրդային քաղաքացի չե, ապա նրա հեղինակի իրավունքը մեզ մոտ ճանաչվում ե միայն ԽՍՀՄ-ի և համապատասխան պետության միջև համաձայնություն գոյություն ունենալու դեպքում և միայն այդ համաձայնության սահմաններում: Այդ կարգը համապատասխանում ե ՀՍԽՀ-ի Քաղ. Որենսգրքի կիրարկման մասին վորոշման 8-րդ հոդվածին, վորի համաձայն «ստար պետությունների քաղաքացիների իրավունքները, վորոնց հետ ԽՍՀՄ մտել ե այս կամ այն համաձայնության մեջ, կարգափորվում են այդ համաձայնություններով»:

Ինչպես տեսնում ենք, ստարյերկրյա հեղինակների իրավունքների պաշտպանությունը վորպիս ընդհանուր կանոն, որենում չի սահմանված և այդ պաշտպանության ու նրա սահման-

ների հարցի լուծումը թողնվում ե այս կամ այն պետության հետ կնքված միջազգային համաձայնություններին:

Ոտարյերկրյա քաղաքացի հեղինակների իրավունքի պաշտպանության գլխավոր հարցը, վորով նրանք ամենից ավելի յենշահագրգոված, որ նրանց յերկի թարգմանության վերաբերյալ իրենց ունեցած հեղինակի իրավունքի հարցն ե: Այս հարցում կարող են վորով դժվարություններ առաջանալ, քանի վոր հեղինակների իրավունքի մեր որենքով թարգմանության իրավունքը չի մանում հեղինակի իրավունքի կազմի մեջ, և ուրիշի յերկի թարգմանությունը այլ լեզվով՝ հեղինակի իրավունքի խախտում չի համարվում:

Այն հարցը, թե անգործունակ հեղինակները (18 տարեկանից փոքր անձինք և հոգեկան հիվանդները) կարող են արդյոք հեղինակի իրավունքի սուբյեկտներ լինել, —պետք ե լուծվի դրական իմաստով, քանի վոր նրանք հանդիսանում են յերկի ստեղծագործողները, սակայն ընդհանուր քաղաքացիական որինքի հիման վրա, նրանց հեղինակի իրավունքի պաշտպանությունը և այդ իրավունքի տնօրինությունը իրականացվում ե նրանց հոգաբարձուների և ինամակալների կողմից (ՀՍԽՀ Քաղ. Որենսգր. հոգ. 7—10): Տարբերինակ կլինիկ որինակ՝ 6 տարեկան հասակում ինքնուրույն յերաժշտական յերկ ստեղծող Մոցարտին իր ստեղծագործության վերաբերմամբ հեղինակի իրավունքի սուբյեկտ լինահաչելը, մանավանդ պրոլետարական դիկտատուրայի պայմաններում, յերբ Խորհրդային իշխանությունը բոլոր միջոցներով սժանդակում և խրախուսում ե յերիտասարդության ինքնուրույն ստեղծագործությունը:

4. ՀԵՂԻՆԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՈՒՄԸ, ԱՆՑՈՒՄԸ ՅԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ

Ինչպես ասացինք, հեղինակի իրավունքը՝ յերկի նկատմամբ ճանաչվում ե հենց յերկը ստեղծելու փաստի հիման վրա: Հեղինակի իրավունքը ծագում և յերկը ստեղծելու մոմենտից, անկախ նրանից, թե այդ յերկը կատարվի հրապարակված թե չհրապարակված վիճակում կամ ձեռագրի, եսկիզ կամ այլ որյեկտիվ վիճակում:

Հեղինակի իրավունքի ճանաչման համար չի պահանջվում գորևե տոմարագրություն կամ գորեիցն ձեռականություններ, կամ թե հատուկ պրօցեսուրայի կատարում՝ հեղինակի կողմից: Եեր-

Հի հեղինակները և նրանց ժառանգները կարող են առմարագրել Հռւստողկոմատում իրենց յերկի լույս տեսնելու, կամ առաջին հրապարակային կատարման, կամ առաջին հրապարակային ցուցադրման ժամանակը։ Տոմարագրման մերժումը շահագրգութանձանց չի զրկում յերկի հրատարակության ժամանակը այլ յեղանակներով ապացուցելու իրավունքից։

Եթերկի տոմարագրումը արգելվ չի հանդիսանում յերրորդ անձանց համար՝ տոմարագրված յերկի վերաբերմամբ հեղինակի իրավունքի մասին վեճ հարուցելու, փորպիսի հարցը պետք է լուծում ստանա դատական կարգով։

Հրատարակված յերկի վրա հեղինակի անվան հշանակումը արդեն հանդիսանում է ապացույց, վոր այդ յերկը պատկանում է այն անձին, վորը իրեն հայտարարում է այդ յերկի հեղինակը, սակայն այդ փաստը չի կարող ծառայել վրապիս անվիճելի ապացույց և չի բացասում հեղինակի իրավունքի, ինչպես նաև յերկի վրա ցույց տրված անձի իրավունքի դեմ առարկելու համարակությունը։ Այս գեպքում առարկող անձը պետք է դատական կարգով ապացուցի իր՝ հեղինակի իրավունքը։

Հեղինակը իր իրավունքը ամրողագին կամ մասամբ կարող է զիջել մի ուրիշին՝ հրատարակչական պայմանագրով (մի կամ մի քանի հրատարակության համար), բեմակատարման պայմանագրով (մի կամ մի քանի ներկայացումների համար), իսկ զեղարգիստական յերկերի նկատմամբ վորոշ գեղարդիատական ձևով կամ վորոշ յեղանակով վերաբերելու պայմանագրով։

Հեղինակի իրավունքը բացի ոտարման կարգով ուրիշին անցնելուց, կարող է նաև ժառանգության և կտակի կարգով տնտեսի ժառանգներին, բայց ժառանգները և հեղինակի իրավունքը ձեռքբ բերողները այդ իրավունքից կարող են ողափել վորոշ ժամանակի ընթացքում, վորը որենքով սահմանված և հեղինակի իրավունքի տեղության համար։

Ա. Հրատարակութան պայմանագիր

Հեղինակի իրավունքը սահմանվում է հրատարակչան պայմանագրի հնքման ձևով։ Համաձայն հեղինակի իրավունքի կանոնադրության 16-րդ հոդվածի, հեղինակի իրավունքի ոտարման վերաբերյալ պայմանագրիը պետք է կնքիլի զրագոր ձեռք։ Այդ պայմանագրի սահմարական վավերացումը չի պահանջվում։ Նույն հոդվածի ծանոթության համաձայն պայմանագրի

գրագոր ձեւը պարտադիր չե այն պայմանագրերի համար, վորոնք կնքվում են պարբերական հրատարակություններում և հանրագիտական բառարաններում տպվելիք յերկերի վերաբերմամբ։ Հեղինակի իրավունքը ուսարելու գեպքում։ Այս գեպքում թեև գրագոր պայմանագրի կնքումը պարտադիր չե, սակայն կողմերը բանագոր համաձայնության այս կամ այն կետի առթիվ հետագա վեճերի հնարավորությունը նկատի ունենալով։ Կարող են գրագոր պայմանագրի կնքել Հանրագիտական բառարանների համար պայմանագրի գրագոր ձեւի պահանումը պետք և համարել ավելի նպատակահարմար։ Այս գեպքում, յերբ հեղինակի իրավունքի ոտարման համար պահանջվում է պայմանագրի պարտագիր գրագոր ձեւը, այդ ձեւի չպահպանելը հիմքը չի ծառայում հրատարակչական պայմանագրին անվավեր ճանաչելու համար, այլ միայն զրկում և կողմերին՝ ի հաստատություն պայմանագրի, վկաների ցուցմունքների գրա հիմնվելու իրավունքից, սակայն նրան չի զրկում գրագոր պայմանագրի բերելու իրավունքից (գրություններ, նամակներ և այլն)։

Մի քանի խոսք նաև հրատարակչական պայմանագրի բովանդակության մասին։

Մեր որենքի 17-րդ հոդվածը տպվիս և հրատարակչական պայմանագրի հետեւյալ ընորոշումը՝ «Հրատարակչան պայմանագրի» և համարվում այն պայմանագրիրը, վորի զորությամբ հեղինակը վորոշ ժամանակով զիջում և որյեկտիվ ձև ստացած իր յերկը հրատարակելու և ատարածելու բացառիկ իրավունքը, իսկ հրատարակիչը պարտավորվում է հիշյալ յերկը լույս ընծայել իր միջոցներով և ձեռք առնել իրենից կախված միջոցներն տյա տարածելու համար։ Թույլ և արգում հրատարակչական պայմանագրի կնքել այնպիսի յերկերի վերաբերմամբ, վորոնք պայմանագրիը կնքելու պահին դեռ որյեկտիվ ձև չեն ստացել (զրական պատվերներ)։

Այս հեղինակը, վորը հրատարակչական պայմանագրով զիջել է հեղինակի իրավունքը, նույն ժամանակամիջոցում իրավունք չունի այդ իրավունքը զիջելու այլ անձանց։ Հեղինակի կողմից հրատարակչական իրավունքը յերկու կամ ավելի հրատարակչությունների զիջելու գեպքում, համաձայն ՀՍԽՀ Քաղ. Որ. 120-րդ հոդվածի իմաստի, հրատարակչության իրավունքը համարվում է զիջված այն հրատարակչության, վորը տառնենք պայմանագրի կնքելու պահին դեռ որյեկտիվ ձև չեն ստացել (զրական պատվերներ)։

հեղինակի իրավունքն այլ անձանց զիջելու իրավունքից, յեթե նույնիսկ արդեն այդ իրավունքը ուրիշին զիջելու վերաբերյալ գոյություն ունի նրա կողմից կնքված հրատարակչական պարմանագիր Այդ կարող ե տեղի ունենալ այն դեպքում, յերբ հեղինակը պայմանագիր և կնքում իր յերկերի լիակատար ժողովածույթի հրատարակության համար: Այդ դեպքում հեղինակը իրավունքը ունի լիակատար ժողովածուի մեջ մտցնելու այն յերկերը, վորոնց հրատարակության իրավունքը նա արդեն զիջել էր այլ անձանց: Հրատարակչական պայմանագրի բովանդակության վերոհիշյալ բնորոշման մեջ փայլուն կերպով արտահայտված ե հեղինակի իրավունքի վերաբերյալ մեր որենքի հիմնական գաղափար՝ ուժեղացնել հեղինակի շահերի պաշտպանությունը: Այդ միտքն ե արտահայտված հեղինակի իրավունքի 18-րդ հոդվածում, վորածեղ ասված ե՝ «հրատարակիչը պարտավոր և յերկը լույս ընծայել իր միջոցներով և ձեռք առնել իրենից կախված միջոցներն այն տարածելու համար»: Ինչպես տեսնում ենք, մեր որենսդրությամբ հրատարակիչը հեղինակի առաջ պատասխանատու յե դառնում հենց այն հանգամանքի համար, վոր անհրաժեշտ միջոցներ ձեռքի չի առնում հեղինակի յերկը տարածելու համար: Հեղինակի համար, թեկուղ և իր հոնարարը լրիվ ստացած, միևնույնը չե թե իր աշխատանքը հրատարակիչ պահետում կմնա անշարժ գիճակում, թե կտարածվի: Ինչպես վերեւում հիշատակեցինք, որենքը պաշտպանում ե վոչ միայն հեղինակի նյութական, այլ և նրա անձնական շահերը: Որենքի 18-րդ հոդվածում նախատեսված են հրատարակչական պայմանագրի պարտադիր կետերը: Հրատարակչական պայմանագրում, որինակը պետք ե նախատեսված լինի առաջինը՝ հրատարակության տիրածը, իսկ յեթե պայմանագրով մի քանի հրատարակությունն ե նախատեսված, ապա նաև հետագա հրատարակությունների տիրածը, յերկը լույս ընծայելու ժամանակամիջոցը, հեղինակին տրվող հոնարարի չափը, հրատարակչական պայմանագրի ժամանակամիջոցը: Յեթե հրատարակչական պայմանագրով չի նախատեսված, վոր հրատարակչությունն իրավունքը ունի յերկը վերահրատարակելու, այդ դեպքում հրատարակչությունը՝ կարող յերկը վերահրատարակել միայն այն դեպքում, յերբ կտանաշը համար հեղինակի գրափոր համաձայնությունը: Նույն որենքի 26-րդ հոդվածը կուսմոզմատին իրավունք և վերապահում հրատարակչին՝ առ ունց հեղինակի գրափոր համաձայնությունը, հրատարակչին իրավունքը ուժի ուժի ուժի համաձայնությունը:

(Վորի թվում նաև զիտական և հրապարակախոսական), յերաժշտական և յերաժշտական-դրամատիկական յերկերի համար: Այս անգամ ևս որենքը իր պաշտպանության տակ և առնում հեղինակների իրավունքները, քանի վոր համաձայն նույն 26-րդ հոդվածի՝ հրատարակչական պայմանագրի այն պայմանները, վորոնք տիպային պայմանագրի պայմանների համեմատությամբ վատթարացնում են հեղինակների իրավունքները, համարիություններն այդ դեպքում վորոշվում են տիպային պայմանագրի համապատասխան հոդվածներով,

Հրատարակչական պայմանագրի կնքումը խոշոր նշանակություն ունի հեղինակի, և հրատարակչի իրավունքներն ու պարտականությունները ձատորեն վորոշելու և կոնկրետացնելու համար, և միաժամանակ հանդիսանում և հեղինակի նորմալ սահմանագործական աշխատանքի համար տնհրաժեշտ նյութական պայմանները ապահովելու մի միջոց՝ զրական, զիտական և գեղարվեստական արտադրանքի վորակը բարձրացնելու համար:

Հրատարակչական պայմանագրի կնքելիս, հեղինակի հոնարաժեքը չափը չի կարող ՀՄԽՀ-ի ժողկոմիստրի կողմից սահմանագործություններից պահանջմանը սակայն այդ չի նշանակում, վոր հեղինակը չի կարող պայմանագրում նախատեսել ժողկոմիստրի կողմից սահմանագործություններից ավելի բարձր գրույքը ներ:

Որենքի 20-րդ հոդվածը խոսում է միայն հեղինակի հոնարաժեքի նվազագույն գրույքների մասին, վորից պակաս գրույքը չեն կարող լինել հեղինակին վարձատրելու համար:

Հեղինակի համար վոչ պակաս կարեղը նշանակություն ունի հրատարակչության կողմից հրատարակչական պայմանագրով ստացած յերկի հրատարակության իրավունքը այլ անձի դիմելով հարցը: Մեղ մոտ թեակիտ և զիան մասնավոր ժողովակություններ, բայց հեղինակի համար յերբեմն նշանակություն ունենալու մեջ թե վոր հրատարակչությունը ինը յերկը լույս ընթացնելու Մոտիվները կարող են լինել առաջին՝ յերկի շտապ հրատարակությունը, տեխնիկական պիես կամ առաջնադրված հրատարակությունը, յերկի ավելի հաջող արածումը և այլն: Այդ նպատակով որենքի 24-րդ հոդվածը արգելում է հրատարակչին՝ առ ունց հեղինակի գրափոր համաձայնությունը, հրատարակչին՝ առ ունց հեղինակի գրափոր համաձայնությունը, հրատարակչին՝ գրափոր համաձայնությունը:

Հրատարակչական պայմանագրի մասին խոսելիս անհրաժեշտ է կանգ առնել նաև այդ պայմանագրի և յերկի հրատարակության ժամանակամիջոցի հարցերի վրա: Համաձայն հեղինակի իրավունքի կանոնադրության 19-րդ հոդվածի՝ հրատարակչական պայմանագրը կարող է կնքիլ և տարրուց վոչ ավելի ժամանակով: Այդ ժամանակը հաշվում է հրատարակչական պայմանագրի կնքելու կամ ձեռագիրն ընդունելու որից, յեթե այդ ավելի ուշ և տեղի ունեցել, կամ ընդունման համար սահմանվող ժամանակամիջոցները լրանալու որից, յեթե ձեռագիրն ընդունվելու յև պայմանագրի ամաժակից ուշ, իսկ յեթե յերկը բաղկացած է յերկու կամ ավելի հատորներից, այդ դեպքում ժամանակամիջոցը հաշվում է վերջին հատորի ձեռագիրը հրատարակչությանը հաւանելու որից:

Հրատարակչության պայմանագրի հիշված 4 տարկա ժամանակամիջոցը չի տարածվում յերաժշտական, յերաժշտական-դրամատիկական դրամատիկական, ինչպես նաև լուսանկարչական ու համանման արագրությունների հրատարակության մասին կնքվող պայմանագրերի վաստակում և սահմանված ժամանակամիջոցին, վորի ընթացքում հրատարակչությունը պարտագոր է յերկը լույս ընծայել, ապա համաձայն հեղինակի իրավունքի որենքի 22-րդ հոդվածի՝ հրատարակությունը պարտագոր է յերկը լույս ընծայել պայմանագրով վորոշված ժամանակամիջոցում, վորը չի կարող համենայն դեպքում ավելի լինել՝

ա) պարբերական հրատարակությունների, ինչպես նաև մինչև 5 տպագրական թերթի ծավալով գրքերի համար,— 6 տպագրի:

բ) մինչև 10 տպագրական թերթի ծավալով այլ պրական յերկերի համար— 1 տարուց.

գ) վերոհիշյալ կետերի տակ չընկնող այլ գրական յերկերի համար— 2 տարուց:

Այդ ժամանակամիջոցները հաշվում են հրատարակչական պայմանագրը կնքելու կամ ձեռագիրն ընդունելու որից, յեթե այդ ավելի ուշ և տեղի ունեցել:

Անհրաժեշտ է այստեղ խօսել նաև այն հարցի մասին, թե հրատարակչը և տեսարանային ձեռնարկությունը իրավունք ունեն հեղինակի յերկի մեջ փոփոխություններ մտցնելու տառանց նրա համաձայնության, թե վոչ: Համաձայն հեղինակի իրավունքի հրատարակչը 18 րդ հոդվածը հեղինակի կենցանության ժամանակ: Այդ յերկու հոդվածների համապատասխան ժամանակը պաշտպանում է յերկը ինչպես հրատարակչի մասին, այսինչ հեղինակի իրավունքի հիմանըների 18 րդ հոդվածը հեղինակի կենցանության ժամանակը պաշտպանում է յերկը ինչպես հրատարակչի մասին, առաջնային ձեռնարկության մասին, այսինչ հեղինակի իրավունքի հիմանըների 18 րդ հոդվածը հեղինակի կենցանության ժամանակը պաշտպանում է յերկը ինչպես հրատարակչի մասին, առաջնային ձեռնարկության կողմէց փոփոխությունների յենթարկելուց: Այս յերկու հոդվածների համեմատությունից և վերը նշումում պետք է գալ այն յեղբակացության, վոր հեղինակի մահից հետո, տեսարանային ձեռնարկությունը իրավունք ունի ցեմակատարման յերկերի մեջ փոփոխություններ մտցնելու առանց հեղինակի ժամանցների համաձայնության:

Թյան ժամանակ հրատարակիչը և տեսարանային ձեռնարկությունը իրավունք չունեն իրենց հայեցողությամբ զորեւ լրացում, կրծատում և առհատարակ փոփոխություն մտցնել ինչպես յերկի, նույնպես և յերկի վերնազրի ու նրա վրա նշանակած հեղինակի անվան մեջ, տառանց հեղինակի համաձայնությունն ստանալու հեղինակի կենցանության ժամանակ, առանց նրա իրավունքն ստանալու, հրատարակիչը իրավունք չունի նույնպես նրա յերկին իլլուստրացիաներ կցելու:

Ինչպես տեսնում ենք հեղինակի յերկը նրա կենցանության ժամանակ որենքով պաշտպանվում և զորեւ փոփոխության յենթարկգելուց:

Ի՞նչպես ե զորոշվում այս հարցը հեղինակի մահից հետո: Սյս հարցի պատասխանը տալիս է ՀՄԽՀ-ի հեղինակի իրավունքի որենքի 27-րդ հոդվածը, ըստ վորի հեղինակի մահից հետո հրատարակիչն իրավունք ունի իր հայեցողությամբ զորեւ փոփոխություն մտցնել յերկի մեջ, տառանց հեղինակի ժառանգների համաձայնության: Փխստություններ մտցնելու վերաբերյալ ժամանցների համաձայնությունը չուտանալու գեղգում հրատարակիչը այդ իրավունքը կարող է ստանալ Լուսդողկառադիք:

Ենթե հրատարակության ընազավառում յերկը պաշտպանում և փոփոխությունների յենթարկգելուց, ինչպես հեղինակի կենցանության ժամանակ, նույնպես և նրա մահից հետո, ապա յեմակատարման յերկերի բնագույնությունը կարող է տեղի ունենալ միայն հեղինակի կենցանության ժամանակ: Այդ յերկում է նրանից, վոր հեղինակի իրավունքի 27-րդ հոդվածը, վորը խոսում է հեղինակի մահից հետո յերկը փոփոխության յենթարկգելուց պաշտպանական մասին, հիշատակում է միայն հրատարակչին և վոչ մի խոսք չի տառած տեսարանային ձեռնարկության մասին, այսինչ հեղինակի իրավունքի հիմանըների 18 րդ հոդվածը հեղինակի կենցանության ժամանակը պաշտպանում է յերկը ինչպես հրատարակչի մասին, առաջնային ձեռնարկության կողմէց փոփոխությունների յենթարկելուց: Այս յերկու հոդվածների համեմատությունից և վերը նշումում պետք է գալ այն յեղբակացության, վոր հեղինակի մահից հետո, տեսարանային ձեռնարկությունը իրավունք ունի ցեմակատարման յերկերի մեջ փոփոխություններ մտցնելու առանց հեղինակի ժամանցների համաձայնության:

Բ. Բեմակատարման պայմանագիր

Հեղինակի իրավունքի մասնակի ոտարման ձևերից մեկը հանդիսանում է բնակատարման պայմանագիրը։ Համաձայն մեր սրենքի, բնակատարման պայմանագիրը է կոչվում այն պայմանագիրը, զորի զորությամբ հեղինակն իր յերկի հրապարակային կատարման իրավունքը զիջում է, իսկ բնակատարողը (տեսարանային ձեռնարկությունը) պարտավորվում է իրագործել նրա բնակատարումը (հրապարակային կատարումը) զորոշված ժամանակամիջոցում։

Բնակատարման պայմանագիրն ինարկե, յերկի հրատարակության իրավունք չի տալիս, ինչպես և հրատարակչական պայմանագիրը չի տալիս յերկի հրապարակային կատարման իրավունք։ Բնակատարման պայմանագիրը, թատրոնի գիրեկցիային հետ, մեծ մասամբ կնքվում և վոչ թե հեղինակի (չնայած նա զրկված չի այդ իրավունքից), այլ նրա շահերը ներկայացնող կազմակերպության կողմից։ Մեզ մոտ այդ կազմակերպությունը հանդիսանում է Հայաստանի՝ հեղինակների իրավունքների պաշտպանության կարչությունը (Հայոքամկոմը)։ Յերկու դեպքումն ել բնակատարման պայմանագրի առարկան հանդիսանում է հեղինակի կողմից իր յերկերի հրապարակային կատարման բացառիկ իրավունքի հանձնումը թատրոնի գիրեկցիային։ Բնակատարման պայմանագիրը կարող է տեղի ունենալ միայն այն չհրատարակված յերկերի նկատմամբ, յերբ նրանց հրապարակային կատարման բացառիկ իրավունքը պատկանում է հեղինակին։

Որինքի 29-րդ հոդվածը, զրախոն պատվերի համանմանությամբ, թույլ ե տալիս բնակադրական պստիրի պայմանագրի կնքումը, այսինքն բնակատարման պայմանագիր կնքել այնպիսի յերկի վերաբերմամբ, վորը պայմանագիր կնքելու պահին գեռարյեկտիվ ձև չի ստացել։

Բնակատարման պայմանագրի մեջ պետք է նշորեն վորոշված լինեն ստարվող իրավունքից ոգտվելու բնույթը, ծավալը և պայմանները, մասնավորապես այդ իրավունքից ոգտվելու տերիտորիայի ստումանները, պայմանագրի ժամանակամիջոցը, անձին հրապարակային կատարման իրագործման ժամանակամիջոցը, հեղինակի վարձատրության չափը և հրապարակային կատարումների (ներկայացումների, հասերդների) թիվը։

Տեղին կի լրս վրան քի վերս թրամակայի լրեն քը սսհմանում է

նաև բեմակատարման պայմանագրի հետեւյալ յերեք պարտադիբ պայմանները։ Առաջին՝ բնակատարման պայմանագրը պետք է կնքված լինի յերեք տարուց վոչ ավելի ժամանակով՝ հաշվված յերկի առաջին հրապարակային կատարման որից։ Յերկրորդ՝ տեղաբանացին ձեռնարկությունը պարտավոր է յերաժշտական-դրամատիկական (օպերաներ, ոպերատորներ), խորեոգրաֆիկ յերկերի բնակատարումը իրագործել յերկու տարուց վոչ ուշ՝ հաշվը-ված հրչված յերկերի ձեռագիրը հեղինակի կողմից հանձնվելու որից, իսկ մեացած բոլոր յերկերի նկատմամբ, մասնավորապես դրամաների՝ մի տարուց վոչ ուշ՝ վերջապես, յերբորդ պայմանը կայանում է նրանում, վոր մեկ բնակատարման պայմանագրով թույլ ե արգում յերկի հրապարակային կատարումը իրականացնել միայն մեկ քաղաքի սահմաններում և 150 անգամեց վոչ ամելի։ Զրատարակված յերկի բնակատարման մասին մի տեսարանացին ձեռնարկության հետ կնքված պայմանագրը հեղինակին չի զրկում մի այլ տեսարանացին ձեռնարկության հետ նույն յերկի բնակատարման պայմանագրի կնքելու իրավունքից, յեթե բնակատարումը իրականացվելու յետարբեր քաղաքներում։

Բնակատարման պայմանգրի՝ աերբիտորիայի կանոնից ու ընթաց թույլ ե տալիս բացառություն կատարել բանվորական և կարմիր բանակային ակումբների սպահին այն խմասավ, վոր հեղինակն իր յերկի բնակատարման իրավունքը կարող է հանձնել այդ ակումբներին, թեկուզ նույն այն քաղաքում, վորեկը ընթացքումը հեղինակի կողմից արդեն հանձնված է տեսարանացին ձեռնարկություններին, սակայն այդ ակումբներում (բանվորական, կարմիր բանակային) չհրատարակված յերկերի բնակատարումը կարող է կատարվել միայն հեղինակի հետ կնքված բնակատարման պայմանագրի հիման վրա։ Բնակատարման պայմանագիր կնքելիս, կողմերը սահմանում են հեղինակի հանարարի չափը, վորը չի կարող պակաս լինել այն նորմաներից, վորոնք սահմանված են որինքով։

Յեթե բնակատարությունը և հրապարակային կատարումը չեն իրականացվում բնակատարման պայմանագրով կամ որենքու սահմանված ժամանակամիջոցում, այդ գեղաքում հեղինակի հայտարարության համաձայն պայմանագրի գաղաքում և և տեսարանացին ձեռնարկությունը պարտավոր է հեղինակին վճարել պայմանագրված ամրող հոնարարը։

Առանձնապես անհրաժեշտ ենք համարում խոսել կինո-սցե-

Նարիաների բեմակատարման պայմանագրի մասին, Վերևում առացինք, վոր տեսարանային ձեռնարկությունները պարտավոր են յերաժշտական դրամատիկական և խորեոգրաֆիկ յերկերի բեմադրումը իրականացնել յերկու տարուց վոչ ուշ, իսկ բոլոր մացած յերկերինը՝ մեկ տարուց վոչ ուշ, հաշվված յերկերի ձեռագիրը ճեղինակի կողմից հանձնելու որից: Այս ընդհանուր կանոնից բացառություն և կատարվում կինո-սցենարիաների համար: Սցենարիան ձեռք բերողը պարտավոր չի նկարը ցուցազրելու, յեթե պայմանագրում հակառակը չի նախատեսնված: Այս բղիքում և ճեղինակի իրավունքի որենքի ՅԵ բդ հոդվածից, վորակեղ ասված ե՝ «Սցենարիան ձեռք բերողը պարտավոր չի նկարը ցուցազրելու, յեթե պայմանագրով հակառակը չի վորոշված»:

Կինո-սցենարիաների նկատմամբ յեղած այսպիսի բացառությունը բացարձում և նրանով, վոր մեզ մոտ կինո-սցենարիաները մէծ մասամբ ձեռք են բերվում կինո-կազմակերպությունների կողմից՝ սցենարիստների աշխատանքը խրախուսելու համար, չնայած նրան, վոր այդ սցենարիաներից շատերը չեն կազող ոգտադրվել կինո-ժապավենների վերածելու համար:

Անհրաժեշտ և հատկապես հաշվի առնել այն հանգամանքը՝ վոր յուրաքանչյուր կինո-սցենարիայի ցուցազրման հետ կապված ևն խոշոր ժախսեր, բայց այդ կանոնը չի բացասում, վոր պայմանագրի կարգով նախատեսնվի կինո-կազմակերպություն պարտավորությունը՝ ցուցազրել կինո-սցենարիան: Այդ դեպքում, եթե կինեմատոգրաֆիկ յերկի ցուցազրումը չսկսվի պայմանագրով վորոշված ժամանակի ընթացքում, ապա ճեղինակի միակողմ դիմումի հիման վրա պայմանագրիը լուծվում ե, իսկ ճեղինակն իրավունք ունի ստանալու պայմանագրված միանվանք վարձատրությունը: Կինեմատոգրաֆիկ յերկերի համար բեմակատարման պայմանագրիը չի սահմանափակված ժամանակամիջոցվէ:

Զհրապարակված, թեկուզ և մի անգամ հրապարակուեն կատարված յերկերի նկատմամբ ճեղինակի իրավունքները մի քիչ սահմանափակվում են: Համաձայն ԽՍՀՄ 1928 թ. սայրիս 16-ի ճեղինակի իրավունքների հիմունքների 8-րդ հոդվածի, չնրապարակված, թեկուզ մի անգամ հրապարակուեն կատարված բիմակատարման յերկերի (յերաժշտական, դրամատիկական և այլն) նկատմամբ, իրավունք և վերապահվում համապատասխան հանրապետությունների կուսակրության ժողովրդական կոմիսա-

թիատրներին՝ թուլառութիւն յերկերի հրապարակութիւն կուտասումը առանց ճեղինակի համաձայնության, ո՛ճարելով ճեղինակին հոնարար դաշնակից հանրապետությունների որբենադրությամբ սահմանված կաւգում:

Ճեղինակի իրավունքի հիմունքը 8 րդ հոդվածի ճիման վրա, ԽՍՀՄ-ի կուսակրության 1933 թ. սեպտեմբերի 28-ին հրատարակել և մի վորոշում, վորը կարգսվորում է չնրապարակված, բայց մի անգամ հրապարակուեն կատարված, յերկերի բեմակատարման հարցը: Այդ վորոշմամբ նախատեսված է ճեղինակարգը:

